ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Հայկ Արզումանի Հարությունյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**
   Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2018թ. փետրվարի 2-ից 4-ը

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Էներգետիկայի բնագավառում հայ-իրանական համագործակցության ընթացիկ հարցերը քննարկելու նպատակով

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Իրանի հետ գազի բնագավառում համագործակցության ընդլայնում,
   Իրանի հետ էլեկտրաէներգետիկայի բնագավառում համագործակցության ընդլայնում, այդ թվում տարածաշրջանային մակարդակով:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպում կայացավ ԻԻՀ նավթի նախարարի տեղակալ, Իրանի գազի ազգային ընկերության (NIGC) կառավարող տնօրեն Հ.Արաղիի հետ: Քննարկվեցին գազ-էլեկտրաէներգիայի դիմաց ծրագրի ծավալների ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության այլ հնարավորությունները:
   Հանդիպում կայացավ ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Հ.Հայերիի հետ: Քննարկվեցին Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների ավելացման հնարավորությունները, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում հայ-իրանական համատեղ այլ ծրագրերի իրականացման ընթացքը:
   Հաշվի առնելով, որ 2018թ. փետրվարի 27-28-ը Երևանում նախատեսվում է անցկացնել հայ-իրանական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստը՝ այցի ընթացքում քննարկվեցին նաև 15-րդ նիստի օրակարգային և նախապատրաստական հարցերը:

7. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել աշխատանքները իրանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

05.02.2018